76

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/02/2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 08 ապրիլի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի **ապրիլի 08-ին** քննելով Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ Արմեն Հայկյանցի կողմից հայտարարագրման ենթակա տվյալը «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականի փետրվարի 10-ի N 02 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1. Հանձնաժողովն, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրեն վերապահված գործառույթները, պարզել է, որ Բարձրագույն դատական խորհրդի

նախկին անդամ Արմեն Հայկյանցի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ներկայացված չէ 2020 թվականի հունվարի 01-ից ապրիլի 03-ն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտը՝ աշխատավարձը, ինչի առնչությամբ 2021 թվականի փետրվարի 10-ին հարուցվել է թիվ N 02 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2. 2021 թվականի հունվարի 26-ին Արմեն Հայկյանցը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 04/21 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.3. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2021 թվականի մարտի 23-ին, որը Արմեն Հայկյանցի միջնորդությամբ տեղափոխվել է և գործի քննության օր է նշանակվել 2021 թվականի ապրիլի 08-ը: Գործի քննությունն իրականացվել է Արմեն Հայկյանցի մասնակցությամբ:

2. Արմեն Հայկյանցի բացատրությունը

Վարույթի մասնակից Արմեն Հայկյանցը հայտնել է, որ հայտարարագրում կիրառված «եկամուտներ» եզրույթը չի հուշել, որ դրա տակ պետք է հասկանալ նաև աշխատավարձը: Այս հանգամանքը Արմեն Հայկյանցը մեջբերել է այն իրողության համատեքստում, որ երկու տասնամյակից ավել դասավանդում է Երևանի պետական համալսարանում «քաղաքացիական իրավունք» և «ընտանեկան իրավունք» առարկաները և իր մոտ արձանացած է եղել այն համոզումը, որ աշխատավարձը հանդիսանում է եկամտի առանձնահատուկ տեսակ, որի վրա առաջնահերթորեն հիմնված է հասարակության միջին անդամի կենսապահովումը: Նշել է նաև այն մասին, որ օրենքը միշտ էլ աշխատավարձը եկամուտների մյուս դրսևորումների շարքում առանձնացրել է կոնկրետ վկայակոչումով՝ դրանով իսկ ընդգծելով աշխատավարձի հանդեպ հասարակական պետական հատուկ վերաբերմունքը:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների քննություն, հաստատված է համարում հետևյալը.

3.1 2020 թվականի ապրիլի 3-ին Արմեն Հայկյանցը ստանձնել է Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնը, և դարձել է հայտարարատու:

3.2 Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ Արմեն Հայկյանցի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ չի ներկայացվել 2020 թվականի հունվարի 01-ից ապրիլի 03-ն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտը՝ աշխատավարձը:

78

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը:

4.1 Արմեն Հայկյանցն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնակարգման համաձայն հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրն ստացված եկամուտները:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասին համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե **կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի,** գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, այն է՝

Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ Արմեն Հայկյանցի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ներկայացված չէ 2020 թվականի հունվարի 01-ից ապրիլի 03-ն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտը՝ աշխատավարձը, որով խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը): 80

Վարույթի մասնակցի այն դիրքորոշմանը, որ աշխատավարձը հանդիսանում է եկամտի առանձնահատուկ տեսակ, չի հիմնավորվում Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներով, որտեղ թվարկված են եկամտի տեսակները, այդ թվում նաև աշխատավարձը:

Տվյալ պարագայում իրավախախտման օբյեկտիվ կողմը դրսևորվել է որպես եկամուտ հայտարարագրման ենթակա աշխատավարձի մասին տվյալը «հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում չներկայացնելով:

Սույն գործում քննարկվող փաստական հանգամանքների համակցված գնահատման արդյունքում Հանձնաժողովը ***եզրահանգում է***.

- հայտարարագրման ենթակա տվյալը՝ ստացված եկամուտը գոյացել է բացառապես խախտում կատարած անձի աշխատանքի վարձատրությունից:
- Եկամուտը ստացվել է մինչև հայտարարտու հանդիսացող անձի պաշտոնի ստանձնումը:
- խախտում կատարած անձն առաջին անգամ է ներկայացրել «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագիր:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Արմեն Հայկյանցի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն այն հիմնավորմամբ, որ խախտումը անձի կողմից թույլ է տրվել մինչ հայտարարագրման պարտավորություն ունեցող պաշտոնի ստանձնումը ստացված այն եկամուտի կապակցությամբ, որը գոյացել է բացառապես վերջինիս աշխատավարձից, համապատասխան հայտարարագիրը ներկայացվել է առաջին անգամ:

Խախտման նվազ նշանակություն ունենալը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված կարգավորման համաձայն, գործը վճռելու համար լիազորված մարմնի համար հիմք է խախտողին վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողությամբ բավարարվելու համար:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումը, Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործի քննության շրջանակներում նպատակային առումով էական է այն, որ հաստատված է խախտման կատարված լինելը և դրա հանրորեն նվազ վտանգ ներկայացնելը, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված կարգավորման համաձայն՝ իրավունք է վերապահում վարչական մարմնին գործն ըստ էության լուծել՝ բավարարվելով բանավոր դիտողությամբ:

81

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմեն Հայկյանցին ազատել վարչական պատասխանատվությունից՝ կատարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Հայկյանցին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմեն Հայկյանցին տրամադրել 7 աշխատանքային օր՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ